ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1»

ք.Երևան «04» «05» 2018թ.

ՀՀ բնապահպանության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Հ.Հովհաննիսյանի, որը գործում նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Սմարթլայն» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Տ.Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված №1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի:

2.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3. Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4. Եթե հանձնվել է պայմանագրի Հավելված №1-ով նկարագրված տեխնիկական բնութագրի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրի Հավելված №1-ով նկարագրված տեխնիկական բնութագրին համապատասխան ապրանքով:

2.1.5. Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում, կամ խախտվել է Պայմանագրի 4.1 կետով սահմանված պայմանը.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 3 (երեք) աշխատանքային օրից ավելի,

գ) մատակարարված Ապրանքի շուկայական գինը ավելի քան 5 (հինգ) տոկոսով ավելին է Ապրանքի հանձնման պահին շուկայում գործող գներից,

դ) Վաճառողը չի կատարել Պայմանագրի 2.4.3, 2.4.4 և 2.4.8 կետերով նախատեսված պարտավորությունները:

2.1.8. Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2. Գնորդը պարտավոր է՝

2.2.1. Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող Պայմանագրի շրջանակներում նախատեսված անհրաժեշտ գործողությունները:

2.2.2. Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3. Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5. Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3. Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1. Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2. Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3. Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1. Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4. Վաճառողը պարտավոր է՝

2.4.1. Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2. Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4. Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5. Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6. Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7. Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8. Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9. Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10. Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Պայմանագրի գինը կազմում է **1006 920 (մեկ միլիոն վեց հազար ինը հարյուր քսան)** ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2. Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված №2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին: Ապրանքի նոր և չօգտագործված լինելու պայմանը պարտադիր է:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1. Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված №3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված №3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2. Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3. Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4. Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

5.5. Ապրանքի մատակարարման ժամկետը սահմանվում է առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ Վաճառողը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2. Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3. Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4. Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5. Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6. Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2. Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3. Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4. Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6. Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8. Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9. Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11. Պայմանագիրը կազմված է 5 (հինգ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի №№ 1, 2, 3 և 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12. Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ բնապահպանության նախարարություն	**«Սմարթլայն» ՍՊԸ**
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք	ք.Երևան, Վարդանանց 110
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 900011018646	ՀՀ 163007031509
ՀՎՀՀ 02507198	ՀՎՀՀ 01548908
ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ղեկավար	«Սմարթլայն» ՍՊԸ-ի տնօրեն
Հ.Հովհաննիսյան	***Տ.Ղարիբյան***
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	**Կ.Տ.**

Հավելված №1
«04» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
տնօրեն
Տ.Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ծագման երկիրը	տեխնիկական բնութագիրը	չափի միավորը	միավորի գինը	ընդհանուր գինը	ընդհանուր քանակը	մատակարարման			
									ենթակա քանակը	Ժամկետը	հասցեն	
1	30192114/1	Թանաք շտամպի բարձիկի համար	ՉԺՀ	Թանաք կնիքի բարձիկի համար, չափածրարված 30 մլ տարրաներով:	հատ	110	1100	10	5	30.06.2018թ.	վերամիավորման 2դեպք-ում 3-րդ ամիսվա սահմանի դեպքում, ՀՀ ԲՆ ԳՀԱՊՁԲ	
									5	30.09.2018թ.		
3	30192710/1	Սոսնձամատիտ, գրասենյակային	ՉԺՀ	Չոր սոսինձ (սոսնձամատիտ)՝ թղթեր սոսնձելու համար: Քաշը՝15 գրամ:	հատ	100	5000	50	25	30.06.2018թ.		
									25	30.09.2018թ.		
4	24911400/1	Սոսինձ	ՉԺՀ	Սոսինձ հեղուկ, թղթեր սոսնձելու համար: Քաշը՝ 25 գրամ:	հատ	100	5000	50	25	30.06.2018թ.		
									25	30.09.2018թ.		
5	24911200/1	սոսինձ, էմուլսիա	ՌԴ	Սոսինձ պոլիվինիլացիտատային /էմուլսիա/	տուփ	160	3200	20	10	30.06.2018թ.		
									10	30.09.2018թ.		
6	30192160/1	Շտրիխներ	ՉԺՀ	Գրչանման սպիտակեցնող նյութ, գնդիկավոր: Նյութի պարունակություն՝ 7 մլ:	հատ	160	9600	60	30	30.06.2018թ.		
									30	30.09.2018թ.		
7	30192160/2	շտրիխներ	ՉԺՀ	Սպիտակեցնող նյութ վրձինով: Նյութի պարունակություն՝ 7 մլ:	հատ	160	4800	30	15	30.06.2018թ.		
									15	30.09.2018թ.		
8	30192220/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	ՉԺՀ	Գլանափաթեթված ժապավեն 19 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ, ժապավենի երկարությունը՝ 36 մ:	հատ	150	7500	50	25	30.06.2018թ.		
									25	30.09.2018թ.		

9	30192210/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	ՀԺՀ	Գլանափաթեթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ:	հատ	500	10000	20	10	30.06.2018թ.
									10	30.09.2018թ.
10	30197631/1	Թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	ՌԴ	A4 (210x297 մմ) ձևաչափի, չկավճած թուղթ, օգտագործվում է գրասենյակային սարքերով տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ2, սպիտակությունը 95%, տուփում 500 հատ:	տուփ	1,450	617700	426	100	30.06.2018թ.
									150	30.09.2018թ.
									176	15.12.2018թ.
11	30199232/1	ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	ԱՄԷ	Ծրար՝ A4 (210x297) մմ ձևաչափի, 90 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 100 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	30	7500	250	125	30.06.2018թ.
									125	30.09.2018թ.
13	30199281/1	ծրար (C6 114-162մմ)	ԱՄԷ	C6 114-162մմ, թուղթը ոչ պակաս 80 % սպիտակության, 1 մ2 մակերեսը՝ 90 գ զանգվածով N1 օֆսեթային թղթից, ինքնասոսնձվող:	հատ	8.5	21250	2500	1250	30.06.2018թ.
									1250	30.09.2018թ.
14	30199420/1	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով	ՀՀ	Թուղթ նշումների համար, սոսնձվածքը 1,25 մմ, սպիտակությունը 75%, տուփում 100 հատ:	տուփ	90	13500	150	75	30.06.2018թ.
									75	30.09.2018թ.
15	30199430/1	Թուղթ նշումների, տրցակներով	ՀԺՀ	Թուղթ նշումների համար, գունավոր, կպչուն, տարբեր չափերի, տրցակներով, 1 մ2 մակերեսը՝ 70 գ, տուփում 100 հատ:	տուփ	115	5750	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
16	22811150/1	Նոթատետրեր	ՀԺՀ	A4 (210x297 մմ) ձևաչափի, տողերով, թուղթը՝ 70 մ2/գ զանգվածով, կազմը ստվարաթղթե՝ 180 մ2/գ, թերթերի քանակը՝ 70:	հատ	300	9000	30	15	30.06.2018թ.
									15	30.09.2018թ.
19	30192130/1	մատիտներ	ՀԺՀ	Մատիտ գրաֆիտե միջուկով, կարծրությունը HB, ռետինով	հատ	22	4400	200	100	30.06.2018թ.
									100	30.09.2018թ.
20	30192135/1	գրաֆիտե միջուկ, մատիտի համար	ՀԺՀ	Գրաֆիտե միջուկ՝ մեխանիկական մատիտի համար, անվանական տրամագծերը՝ 0,5-0.7 մմ, կարծրությունը HB:	տուփ	80	4000	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
21	30192136/1	մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով	ՀԺՀ	Մատիտ, մեխանիկական զսպախցուկային, F, L, MK1 տիպերի, փոխարինվող գրիֆելի անվանական տրամագիծը՝ 0.5-0.7 մմ:	հատ	150	7500	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
22	30197230/1	Թղթապանակ արագակար	ՀՀ	Արագակար A4 (210x297 մմ) ձևաչափի թղթերի համար, կավճապատ՝ 200 գ/մ2, ստվարաթղթից, մետաղական ամրակով:	հատ	50	15000	300	150	30.06.2018թ.
									150	30.09.2018թ.
23	30197230/2	Թղթապանակ ռեգիստրատոր	ՀԺՀ	Ռեգիստրատոր A4 (210x297 մմ) ձևաչափի թղթերի համար, լայնությունը 8սմ: Թղթապանակ կոշտ ստվարաթղթե կազմով, համապատասխան չափի կռնակով, մետաղյա ամրացման հարմարանքով:	հատ	540	43200	80	40	30.06.2018թ.
									40	30.09.2018թ.
24	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	ՀԺՀ	Թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 (210x297 մմ) ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորություն:	հատ	7.5	22500	3000	1500	30.06.2018թ.
									1500	30.09.2018թ.

25	39241140/1	Դանակ գրասենյակային մետաղյա	ՉԺՀ	Սայրի չափսերը ոչ պակաս 18x100 մմ, պլաստմասե կամ մետաղական բռնակով, թուղթ կտրելու համար:	հատ	70	1400	20	10	30.06.2018թ.
									10	30.09.2018թ.
26	39263410/1	Ամրակ, մետաղյա փոքր	ՉԺՀ	Ամրակ գրասենյակային, փոքր, մետաղական կամ պոլիմերային պատվածքով, չափսը 33 մմ երկարությամբ: Թղթի տրցակները ամրացնելու համար: Տուփում 100 հատ:	տուփ	80	4000	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
27	39263420/1	Ամրակ, մետաղյա մեծ	ՉԺՀ	Գրասենյակային ամրակներ, մետաղական, 50 մմ չափի թղթի տրցակները ամրացնելու համար: Տուփում 100 հատ:	տուփ	230	11500	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
28	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ N10: Տուփում 1000 հատ:	տուփ	50	2500	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
29	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ 26/6: Տուփում 1000 հատ:	տուփ	80	4000	50	25	30.06.2018թ.
									25	30.09.2018թ.
30	30197110/1	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ	ՉԺՀ	Գրասենյակային կարիչների մետաղալարե կապեր՝ 23/13: Տուփում 1000 հատ:	տուփ	320	6400	20	10	30.06.2018թ.
									10	30.09.2018թ.
31	39263510/1	Սեղմակ, փոքր	ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 19 մմ	հատ	10	1000	100	50	30.06.2018թ.
									50	30.09.2018թ.
32	39263520/1	Սեղմակ, միջին	ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 25 մ	հատ	10	1000	100	50	30.06.2018թ.
									50	30.09.2018թ.
33	39263530/1	Սեղմակ, մեծ	ՉԺՀ	Մետաղական, լայնությունը 32 մմ	հատ	25	2500	100	50	30.06.2018թ.
									50	30.09.2018թ.
34	30141200/1	Հաշվասարք, գրասենյակային	ՉԺՀ	12 նիշանի, սեղանի չափերը 16X13 սմ, գործողությունները ցուցադրումով վահանակի վրա ինքնալիցքավորվող	հատ	2,500	25000	10	5	30.06.2018թ.
									5	30.09.2018թ.
35	30197321/1	Կարիչներ, մինչև 20 թերթի համար	ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, մինչև 20 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար	հատ	440	8360	19	9	30.06.2018թ.
									10	30.09.2018թ.
36	30197322/1	Կարիչներ 20-50 թերթի համար	ՉԺՀ	Գրասենյակային կարիչ, 20-50 թերթ մետաղալարե կապերով ամրացնելու համար:	հատ	950	9500	10	5	30.06.2018թ.
									5	30.09.2018թ.
37	30197332/1	Դակիչ	ՉԺՀ	Ծակոտիչ գրասենյակային, երկանցք, նախատեսված մինչև 36 թերթ դակելու համար:	հատ	1,000	10000	10	5	30.06.2018թ.
									5	30.09.2018թ.
38	30234300/1	Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	Թայվան	Սկավառակ՝ էլեկտրոնային տվյալների պահպանման համար, CD-R, ծավալը ոչ պակաս 700 Մբ	հատ	80	1600	20	10	30.06.2018թ.
									10	30.09.2018թ.
39	30234400/1	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	Թայվան	Սկավառակ՝ էլեկտրոնային տվյալների պահպանման համար, DVD-RW, ծավալը 4,7 Գբ	հատ	350	7000	20	10	30.06.2018թ.
									10	15.12.2018թ.
40	30192121/1	Գնդիկավոր գրիչ	ՉԺՀ	Գնդիկավոր, տարբեր գույների, միջուկի երկարությունը 13 սմ, ծայրի հաստությունը 0.5-0.7 մմ, իրանը թափանցիկ պլաստիկից, ցանկացած տեսակի կառուցվածքով, ծայրի մասում կափարիչով:	հատ	35	14000	400	200	30.06.2018թ.
									200	30.09.2018թ.

41	30192128/1	Գելային գրիչ	ՀԺՀ	Գելային, տարբեր գույների, միջուկի երկարությունը 10 սմ, ծայրի հաստությունը 0.5-0.7 մմ, իրանը պլաստիկից կամ այլումինե, ցանկացած տեսակի կառուցվածքով, մեխանիզմով կամ ծայրի մասում կափարիչով:	հատ	80	1600	20	10	30.06.2018թ.	
									10	30.09.2018թ.	
42	30192100/1	ռետին, հասարակ	ՀԺՀ	Ռետին՝ նախատեսված գրաֆիտե մատիտով գրածները մաքրելու համար: Չափսը 4800 մմ3:	հատ	40	2800	70	35	30.06.2018թ.	
									35	30.09.2018թ.	
43	30192720/1	Գծանիշ (մարկեր)	ՀԺՀ	Տարբեր գույնի՝ նախատեսված ընդգծումներ, նշումներ անելու համար, ֆետրից կամ այլ ծակոտկեն նյութից տափակ ծայրոցով:	հատ	125	6250	50	25	30.06.2018թ.	
									25	30.09.2018թ.	
44	30192133/1	Սրիչ մատիտի	ՀԺՀ	Նախատեսված գրաֆիտե մատիտները սրելու համար	հատ	50	1000	20	10	30.06.2018թ.	
									10	30.09.2018թ.	
45	31441000/1	Մարտկոցներ, AAA տեսակի	Լեհաստան	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AAA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	100	5000	50	25	30.06.2018թ.	
									25	30.09.2018թ.	
46	31442000/1	Մարտկոցներ, AA տեսակի	Լեհաստան	Նախատեսված տարբեր տեսակի էլեկտրական սարքավորումների համար, 1.5վ, AA ալկալիական, առնվազն մեկ տարվա պիտանելիության ժամկետով:	հատ	130	6500	50	25	30.06.2018թ.	
									25	30.09.2018թ.	
47	39241210/1	Մկրատ, գրասենյակային	ՀԺՀ	Գրասենյակային, մետաղյա, սուր ծայրով, պլաստմասե բռնակով, 19 սմ երկարությամբ:	հատ	190	5510	29	15	30.06.2018թ.	
									14	30.09.2018թ.	
49	30192700/1	Գրենական պիտույքներ	ՀԺՀ	Գրենական պիտույքների սեղանի հավաքածու, առնվազն 14 կտոր՝ 2 մատիտ, 2 գրիչ, մկրատ, գրասենյակային դանակ, սրիչ, ռետին, քանոն 15 սմ, կարիչ, կարիչի ասեղներ, նշումների թուղթ, ամրակ, կոճգամ	հավաքածու	2,200	11000	5	2	30.06.2018թ.	
									3	30.09.2018թ.	
50	30234500/1	հիշողություն-կրիչներ	ՀԺՀ	Էլեկտրոնային տվյալների պահպանման համար, USB 2.0, ծավալը 16GB, երաշխիքը առնվազն 6 ամիս	հատ	4,000	40000	10	5	30.06.2018թ.	
									5	30.09.2018թ.	
Ընդամենը							**1006 920**				

Հավելված №2
«04» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարության
աշխատակազմի ղեկավար
Հ.Հովհաննիսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
տնօրեն
Տ.Ղարիբյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թվականին՝ այդ թվում (ըստ ամիսների աճողական կարգով)												
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	30192114/1	Թանաք շտամպի բարձիկի համար	-	-	-	-	550	550	825	825	825	1100	1100	1100	**1100**
3	30192710/1	Սոսնձամատիտ, գրասենյակային	-	-	-	-	2500	2500	3750	3750	3750	5000	5000	5000	**5000**
4	24911400/1	Սոսինձ	-	-	-	-	2500	2500	3750	3750	3750	5000	5000	5000	**5000**
5	24911200/1	սոսինձ, էմուլսիա	-	-	-	-	1600	1600	2400	2400	2400	3200	3200	3200	**3200**
6	30192160/1	Շտրիխներ	-	-	-	-	4800	4800	7200	7200	7200	9600	9600	9600	**9600**
7	30192160/2	շտրիխներ	-	-	-	-	2400	2400	3600	3600	3600	4800	4800	4800	**4800**

8	30192220/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 19մմx36մ գրասենյակային, փոքր	-	-	-	-	3750	3750	5625	5625	5625	7500	7500	7500	7500
9	30192210/1	Պոլիմերային ինքնակպչուն ժապավեն, 48մմx100մ տնտեսական, մեծ	-	-	-	-	5000	5000	7500	7500	7500	10000	10000	10000	10000
10	30197631/1	Թուղթ, A4 ֆորմատի1 /21x29.7/	-	-	-	-	145160	145160	362590	362590	362590	617700	617700	617700	617700
11	30199232/1	ծրար, մեծ, A4 ձևաչափի համար	-	-	-	-	3750	3750	5625	5625	5625	7500	7500	7500	7500
13	30199281/1	ծրար (C6 114-162մմ)	-	-	-	-	10625	10625	15938	15938	15938	21250	21250	21250	21250
14	30199420/1	Թուղթ, նշումների համար, սոսնձվածքով	-	-	-	-	6750	6750	10125	10125	10125	13500	13500	13500	13500
15	30199430/1	Թուղթ նշումների, տրցակներով	-	-	-	-	2875	2875	4312	4312	4312	5750	5750	5750	5750
16	22811150/1	Նոթատետրեր	-	-	-	-	4500	4500	6750	6750	6750	9000	9000	9000	9000
19	30192130/1	մատիտներ	-	-	-	-	2200	2200	3300	3300	3300	4400	4400	4400	4400
20	30192135/1	գրաֆիտե միջուկ, մատիտի համար	-	-	-	-	2000	2000	3000	3000	3000	4000	4000	4000	4000
21	30192136/1	մատիտ, գրաֆիտե, տեղադրվող միջուկով	-	-	-	-	3750	3750	5625	5625	5625	7500	7500	7500	7500
22	3019723C/1	Թղթապանակ արագակար	-	-	-	-	7500	7500	11250	11250	11250	15000	15000	15000	15000
23	30197230/2	Թղթապանակ ռեգիստրատոր	-	-	-	-	21600	21600	32400	32400	32400	43200	43200	43200	43200

24	30197231/1	Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ	-	-	-	-	11250	11250	16875	16875	16875	22500	22500	22500	**22500**
25	39241140/1	Դանակ գրասենյակային մետաղյա	-	-	-	-	700	700	1050	1050	1050	1400	1400	1400	**1400**
26	39263410/1	Ամրակ, մետաղյա փոքր	-	-	-	-	2000	2000	3000	3000	3000	4000	4000	4000	**4000**
27	39263420/1	Ամրակ, մետաղյա մեծ	-	-	-	-	5750	5750	8625	8625	8625	11500	11500	11500	**11500**
28	30197111/1	Կարիչի մետաղալարե կապեր, փոքր	-	-	-	-	1250	1250	1875	1875	1875	2500	2500	2500	**2500**
29	30197112/1	Կարիչի մետաղալարե կապեր, միջին	-	-	-	-	2000	2000	3000	3000	3000	4000	4000	4000	**4000**
30	30197110/1	Կարիչի մետաղալարե կապեր, մեծ	-	-	-	-	3200	3200	4800	4800	4800	6400	6400	6400	**6400**
31	39263510/1	Սեղմակ, փոքր	-	-	-	-	500	500	750	750	750	1000	1000	1000	**1000**
32	39263520/1	Սեղմակ, միջին	-	-	-	-	500	500	750	750	750	1000	1000	1000	**1000**
33	39263530/1	Սեղմակ, մեծ	-	-	-	-	1250	1250	1875	1875	1875	2500	2500	2500	**2500**
34	30141200/1	Հաշվասարք, գրասենյակային	-	-	-	-	12500	12500	18750	18750	18750	25000	25000	25000	**25000**
35	30197321/1	Կարիչներ, մինչև 20 թերթի համար	-	-	-	-	3962	3962	6162	6162	6162	8360	8360	8360	**8360**
36	30197322/1	Կարիչներ 20-50 թերթի համար	-	-	-	-	4750	4750	7125	7125	7125	9500	9500	9500	**9500**
37	30197332/1	Դակիչ	-	-	-	-	5000	5000	7500	7500	7500	10000	10000	10000	**10000**

38	30234300/1	Դատարկ սկավառակ, առանց տուփի, CD	-	-	-	-	800	800	1200	1200	1200	1600	1600	1600	**1600**
39	30234400/1	Դատարկ սկավառակ, առանց տուփի, DVD	-	-	-	-	3500	3500	5250	5250	5250	7000	7000	7000	**7000**
40	30192121/1	Գնդիկավոր գրիչ	-	-	-	-	7000	7000	10500	10500	10500	14000	14000	14000	**14000**
41	30192128/1	Գելային գրիչ	-	-	-	-	800	800	1200	1200	1200	1600	1600	1600	**1600**
42	30192100/1	ռետին, հասարակ	-	-	-	-	1400	1400	2100	2100	2100	2800	2800	2800	**2800**
43	30192720/1	Գծանիշ (մարկեր)	-	-	-	-	3125	3125	4687	4687	4687	6250	6250	6250	**6250**
44	30192133/1	Սրիչ մատիտի	-	-	-	-	500	500	750	750	750	1000	1000	1000	**1000**
45	31441000/1	Մարտկոցներ, AAA տեսակի	-	-	-	-	2500	2500	3750	3750	3750	5000	5000	5000	**5000**
46	31442000/1	Մարտկոցներ, AA տեսակի	-	-	-	-	3250	3250	4875	4875	4875	6500	6500	6500	**6500**
47	39241210/1	Մկրատ, գրասենյակային	-	-	-	-	1142	1142	4182	4182	4182	5510	5510	5510	**5510**
49	30192700/1	Գրենական պիտույքներ	-	-	-	-	4477	4477	7700	7700	7700	11000	11000	11000	**11000**
50	30234500/1	հիշողություն-կրիչներ	-	-	-	-	20000	20000	30000	30000	30000	40000	40000	40000	**40000**

Հավելված №3
«04» «05» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1» ծածկագրով պայմանագրի

ԳՆՈՐԴ
ՀՀ բնապահպանության նախարարություն
ք.Երևան, Կառավարական 3-րդ շենք
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՀ 900011018646
ՀՎՀՀ 02507198

ՎԱՃԱՌՈՂ
«Սմարթլայն» ՍՊԸ
ք.Երևան, Վարդանանց 110
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ 163007031509
ՀՎՀՀ 01548908

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 2018թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ***Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պետական գնման պայմանագիր***
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «04» «05» 2018 թ.
Պայմանագրի համարը՝ ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1
Գնորդը և Վաճառողը հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 2018թ. դուրս գրված № _____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կատարողը մատուցել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք են հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն
Կ.Տ.

Հավելված №3.1
«_04_» «_05_____» 2018թ. կնքված
№ «ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ №
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Գնորդ) և «Սմարթլայն» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև «_04_» «_05_____» 2018 թվականին կնքված №«ՀՀ-ԲՆ-ԳՀ-ԱՊՁԲ-18/17-1» պայմանագրի շրջանակներում Վաճառողը «_____» «_____» 2018 թվականին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն